# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵԵԿԿ-ԳՀԱՇՁԲ-26/15 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **30 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 25-30-ը ՀՀ, ք. Երևան, Քըրք Քըրքորյան 16 հասցեում գտնվող՝ «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի գրասենյակում, տեղի ունեցավ գրասենյակի ներքին հարդարման և կահավորման աշխատանքների ձեռքբերման **ԵԵԿԿ-ԳՀԱՇՁԲ-26/15** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Դավթյան՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի վարչատնտեսական բաժնի պետ, |
| Վ. Դավթյան՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի վարչատնտեսական բաժնի տնտեսվար, |
| Ջ. Թովմասյան՝ | «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի հաշվապահ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Դավթյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին՝ դրանց համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5. Ընթացակարգը չկայացած հայտարարելու, հայտարարության տեքստը հաստատելու մասին և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:
6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 25-ին, ՀՀ, ք. Երևան, Քըրք Քըրքորյան 16 հասցեում գտնվող «Երևանի երթևեկության կառավարման կենտրոն» ՀՀ-ի գրասենյակում ժամը 11:00-ին Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային արժեքը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Գրասենյակի ներքին հարդարման և կահավորման աշխատանքներ | 54,244,048.00 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՄԱՐԹԱ ՍՊԸ» | - | +374 94313144 | Yasha-sahakyan@mail.ru | 03024588 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ պարունակող ծրար/ներ/ը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակից/ներ/ի կողմից ներկայացված հայտ/եր/ը կազմված և ներկայացված է/են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, և բացեց համապատասխան գնահատված հայտ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ՝ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով պահանջված

փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ **«ՄԱՐԹԱ» ՍՊԸ-ի**, ում կողմից Հավելված 1-ով ներկայացվող «ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» փաստաթղթում նշված է, որ վերջինս ցանկություն ունի մասնակցելու 29-րդ, 30-րդ, 39-րդ, 42-րդ, 43-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ, 55-րդ, 57-րդ և 59-րդ չափաբաժններին, միաժամանակ Հավելված 2-ով ներկայացված «Գնային առաջարկ» փաստաթուղթը նույնպես լրացված է նշված չափաբաժինների համար, մինչդեռ սույն գնման ընթացակարգը բաղկացած է 1 չափաբաժնից: Ինչպես նաև Հավելված 1-ով ներկայացվող «ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» փաստաթղթում նշված «գործունեության հասցե» դաշտի բովանդակությունը թերի է և չի ապահովում դրա բովանդակության հստակ ընկալումը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակիցների անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների կողմից առաջարկված գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | անվանումը | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Գրասենյակի ներքին հարդարման և կահավորման աշխատանքներ | «ՄԱՐԹԱ ՍՊԸ» | 54,244,048.00 | - | - | - |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 30-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8.2 կետի պահանջներով՝ «ՄԱՐԹԱ» ՍՊԸ-ի հայտը գնահատել որպես անբավարար և մերժել:
4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ՄԱՐԹԱ ՍՊԸ» | անբավարար |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՄԱՐԹԱ ՍՊԸ»-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժել, 2026թ. հունիսի 30-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

2. Հաստատել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Դավթյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Դավթյան ____________

Զ. Թովմասյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________